ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 10-Լ

«01» 02 2023 թ. գ. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լոռու մարզի դատախազ Կարեն Ավագի Գաբրիելյանին ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալի պաշտոնին փոխադրելու և ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ Արմեն Ավետիքի Շահբազյանին Լոռու մարզի դատախազի պաշտոնին նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2023 թվականի հունվարի 30-ի համապատասխանաբար՝ N 36-Ա և N 37-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է կատարել Լոռու մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Կ.Գաբրիելյանի կողմից՝ Լոռու մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Ա.Շահբազյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Մանասյան Անահիտ - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,

Հանձնախմբի անդամներ՝

Մովսիսյան Մովսես -	Լոռու մարզի դատախազի տեղակալ,
Մարտիրոսյան Հայկ -	ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ,
Նազարեթյան Արմինե -	ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետ,
Ղահրամանյան Մարուշ -	ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար,
Գևորգյան Թամարա -	ՀՀ դատախազության առաջին բաժնի պետի պաշտոնակատար,
Մխիթարյան Վեներա -	Լոռու մարզի դատախազության տարածքային բաժնի պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2023 թվականի փետրվարի 17-ը:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ